

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ



**ԳՐԱԿՈՎ. ԱԴԱԿՈՎ.ԿԱԾ
ՊԱԿԱՆՔՆԵՐԸ
ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՒՅՐՈՒՄ**

ISBN 978-9939-9240-5-2



**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ**

ԵՐԵՎԱՆ - 2021

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

**ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ
ՊԱՀԱՆՋՆԵՐԸ
ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)**



ԵՐԵՎԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱՎԱԴԵՄԻԱ

2021

ՀՏԴ 347.736(07)
ԳՄԴ 67.410g7
Մ 371

***Երաշխավորվել է հրապարակության Արդարադատության
ակադեմիայի գիտական խորհրդի կողմից***

Մարկոսյան Տ.Ա. – Իրավ. գիտ. թեկնածու, Արդարադատության ակադեմիայի դասընթացավար, Սնանկության գործով կառավարիչների որակավորման հանձնաժողովի անդամ, ԵՊՀ ուսանողական իրավաբանական խորհրդատվության կենտրոնի դասախոս-կոորդինատոր, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի անդամ

Մարկոսյան Տիգրան Արթուրի

Մ371 Գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթում:
Գիտագործնական ձեռնարկ / Տ.Ա. Մարկոսյան - Եր.,
Արդարադատության ակադեմիա, 2021 - 64 էջ:

Աշխատությունում տեսական աղբյուրների, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական և Վճռաբեկ դատարանի դատական ակտերի, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայի այլ նյութերի հիման վրա վերլուծվել են սնանկության վարույթում գրավով ապահովված պահանջների հետ կապված հարցերը, ներկայացվել են դրանց կապակցությամբ 2019թ. կատարված օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտությունը և նպատակը, ինչպես նաև ձևակերպվել են ոլորտի կատարելագործման ուղղված գիտագործնական որոշակի մոտեցումներ:

Սույն հրատարակությունը կարող է օգտակար լինել դատավորների, սնանկության գործով կառավարիչների, փաստաբանների, իրավաբանական բուհերի և ֆակուլտետների դասախոսների, ասպիրանտների, ինչպես նաև սնանկության հիմնախնդիրներով հետաքրքրվող այլ անձանց համար: Աշխատությունը կարող է ծառայել նաև որպես ուսումնական նյութ:

Աշխատությունը պատրաստվել է Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (EBRD) և Իրավունքի զարգացման միջազգային կազմակերպության (IDLO) կողմից Արդարադատության ակադեմիայի և Բարձրագույն դատական խորհրդի հետ համագործակցությամբ իրականացված «Աջակցություն ՀՀ բարձրագույն դատական խորհրդին» Հայաստանի նոր սնանկության դատարանի գործառնական օժանդակության և կարողությունների զարգացման համար» ծրագրի շրջանակում:

ՀՏԴ 347.736(07)
ԳՄԴ 67.410g7

ISBN 978-9939-9240-5-2

© Մարկոսյան Տ.Ա., 2021

© Արդարադատության ակադեմիա, 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
§ 1. Ապահովված պահանջների բավարարման եղանակների ընդհանուր բնութագիրը.....	8
§ 2. Ապահովված իրավունքի առարկայի իրացումը սնանկության վարույթում.....	14
§ 3. Ապահովված իրավունքի առարկայի իրացումը սնանկության վարույթից դուրս.....	30
§ 4. Ապահովված իրավունքի առարկայի վերադարձը սնանկության վարույթ.....	44
§ 5. Ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխումը.....	48
§ 6. Երրորդ անձ գրավատուն սնանկության վարույթում.....	53
§ 7. Պարտապանի՝ որպես երրորդ անձ գրավատուի կարգավիճակը.....	57

ՆԱԽԱԲԱՆ

Մնանկության ինստիտուտի միջոցով իրավունքի պաշտպանությանը բնութագրական է սնանկության վարույթին մասնակցող անձանց բազմաթվությունը, քանի որ այն ուղղված է ոչ թե առանձին, այլ քաղաքացիական շրջանառության մասնակցի անվճարունակության հետևանքով ծագող բոլոր վեճերի կարգավորմանը և քաղաքացիական շրջանառության կայունության ապահովմանը¹: Ընդ որում, սնանկության վարույթի մասնակիցների բազմաթվությունը ենթադրում է նրանց միջև հակադիր շահերի առկայություն, որը դրսևորվում է ոչ միայն պարտապանի և պարտատիրոջ, այլև պարտատերերի միջև հարաբերություններում, քանի որ պարտապանի ֆինանսական վիճակը, որպես կանոն, բացառում է նրանց բոլոր պահանջների ամբողջությամբ բավարարումը: Այլ կերպ ասած՝ սնանկության վարույթում գործում է «պատերազմ՝ բոլորը բոլորի դեմ» (լատիներեն՝ *bellum omnium contra omnes*) սկզբունքը²: Միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ, չնայած պարտատերերի կարգավիճակի հիմքում դրված հավասարության և համամաս-

¹ Տե՛ս *Кулахметов Б.Р.* Несостоятельность юридических лиц: особенности правового регулирования и правоприменительной практики // Модели, системы, сети в экономике, технике, природе и обществе, 2012, էջ 182:

² Տե՛ս *Фролов И.В.* Банкротство как административно-правовой механизм регулирования экономических конфликтов: Монография. Новосибирск, 2010, էջ 79:

նության սկզբունքներին, նրանք ևս բաժանվում են որոշակի խմբերի, քանի որ պարտատերերի պահանջները կարող են շոշափել տարատեսակ շահեր³:

Պարտատերերի շրջանակում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ապահովված պարտատերերը, քանի որ նրանք, նախքան սնանկության վարույթի հարուցումը, ձեռնամուխ են եղել համապատասխան կառուցակարգերի միջոցով ստեղծել իրենց պահանջների բավարարման երաշխիքներ և նվազեցնել ֆինանսական ռիսկերը⁴: Այս առումով առաջատար դիրք է գրավում գրավի ինստիտուտը, որը թույլ է տալիս գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջը գրավի առարկայի⁵ արժեքից մյուս պարտատերերի հանդեպ նախապատվության իրավունքով ստանալու իր պահանջի բավարարում: Ըստ որում, ինչպես արդարացիորեն նշում է Նյու Յորքի Իրավունքի բարձրագույն դպրոցի պրոֆեսոր Բրայն Ա. Բլումը, գրավով ապահովված պարտավորության անվտանգությունը գոյություն ունի այնքանով, որքանով գրավի առարկան արժեքավոր է⁶:

³ Տե՛ս ЮНСИТРАЛ. Руководство для законодательных органов по вопросам законодательства о несостоятельности, ОРГАНИЗАЦИЯ ОБЪЕДИНЕННЫХ НАЦИЙ, Нью-Йорк, 2005, էջեր 313-314:

⁴ Տե՛ս Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под. ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջեր 310-311:

⁵ Այսուհետ նաև՝ «ապահովված իրավունքի առարկա»:

⁶ Տե՛ս **Brian A. Blum**. Bankruptcy and debtor/creditor: examples and explanations. N.Y., 2006, էջ 146:

Գրավի ինստիտուտի էությանը պայմանավորված սնանկության վարույթում գրավով ապահովված պահանջների հետ կապված հարցերը մշտապես գտնվել են իրավաբան գիտնականների ուշադրության կենտրոնում, և շատ հաճախ արտահայտվել են տեսակետներ առ այն, որ գրավով ապահովված պարտատերերը դուրս են սնանկության վարույթին մասնակցող սուբյեկտների շրջանակից⁷:

Հարկ է նշել, որ գրավով ապահովված պահանջների հետ կապված հարցերը առանձնահատուկ ուշադրության են արժանացել նաև ՀՀ օրենսդրի կողմից: Ասվածի մասին է վկայում այս ոլորտում իրականացվող հետևողական բարեփոխումների շղթան, որոնցից վերջինը «Սնանկության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 12.12.2019թ. թիվ ՀՕ-294-Ն օրենքի⁸ ընդունումն էր: Մասնավորապես, Օրենքի փոփոխություններով, ի թիվս այլնի, անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերին.

⁷ Տե՛ս, օրինակ՝ **Солодилов А.В.** Статус залоговых кредиторов в деле о банкротстве: материально-правовой и процессуальный аспекты // Имущественные отношения в Российской Федерации, 2010, էջ 11:

⁸ Ուժի մեջ է մտել 15.04.2020թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2019.12.26/100(1553) հոդվ.1242: Այսուհետ նաև՝ «Օրենքի փոփոխություններ»:

Սահմանվել են ապահովված իրավունքի առարկայի սնանկության վարույթից դուրս իրացման կանոնները

Նախատեսվել են երրորդ անձ գրավատուին համապատասխան պահանջի մասով ծանուցելու և պարտապանին հավասար կարգավիճակում հանդես գալու երաշխիքները

Կարգավորվել է պարտապանի և երրորդ անձ գրավատուի միաժամանակյա սնանկության դեպքում ապահովված իրավունքի առարկայի իրացման խնդիրը

Ամրագրվել է ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթի ընթացքում ի սեփականություն ընդունելու դեպքում կառավարչի վարձատրության առավելագույն շեմ

Ներդրվել է գրավի առարկան սնանկության վարույթ վերադարձնելու ինստիտուտ

§ 1. Ապահովված պահանջների բավարարման եղանակների ընդհանուր բնութագիրը

«Սնանկության մասին» օրենքը⁹ ապահովված պահանջների և դրանց բավարարման վերաբերյալ հարցերի ընդհանրական կարգավորմանն է նվիրել «Ապահովված պահանջները և դրանց բավարարումը» վերտառությամբ 43-րդ հոդվածը, որի և դրա հետ համակարգային առումով փոխկապակցված մի շարք դրույթների, այդ թվում՝ Օրենքի 39.1-39.3-րդ հոդվածների վերլուծությունը թույլ է տալիս եզրահանգել, որ առկա է գրավով ապահովված պահանջների բավարարման երկու եղանակ.

1. սնանկության վարույթի շրջանակներում.
2. սնանկության վարույթից դուրս:

Հասկանալի է, որ այս եղանակներից որևէ մեկի ընտրությունը կախված է գրավով ապահովված պարտատիրոջ կամահայտնությունից, որը պետք է իրականացվի Օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, ինչպես բխում է Օրենքի ընդհանուր տրամաբանությունից, սնանկության վարույթից դուրս ապահովված պահանջի բավարարման ցանկության մասին պարտատիրոջ կողմից դիմում չներկայացվելու դեպքում նրա պահանջները ենթակա են բավարարման սնանկության վարույթում:

⁹ Ընդունվել է 25.12.2006թ.: Ուժի մեջ է մտել 10.02.2007թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2007.01.31/7(531) Հոդ.139: Այսուհետ նաև՝ «Օրենք»:

Գրավով ապահովված պահանջները սնանկության վարույթում կամ դրանից դուրս բավարարելու եղանակների էությունը քննարկելիս սկզբունքային է դրանց առանձնահատկությունների գնահատումը, որոնց մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում պահանջների բավարարման առնչությամբ հնարավոր սահմանափակումների կիրառելիության հարցը: Մասնավորապես, Օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ապահովված իրավունքի առարկան իրացնելու մասին դիմումը բավարարելու վերաբերյալ դատարանի որոշմամբ ապահովված պարտատերը չի ընդգրկվում սնանկության գործով պարտատերերի ցանկում, և նրա ապահովված պահանջները բավարարվում են բացառապես այդ պարտավորության համար գրավադրված ապահովված իրավունքի առարկայի իրացման հաշվին, իսկ նույն հոդվածի 7-րդ մասի համաձայն. «Եթե ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցները բավարար չեն պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատիրոջ պահանջներն ամբողջովին մարելու համար, ... ապահովված պահանջների չբավարարված (այդ թվում՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձից պարտավորության կատարում չպահանջելու հետևանքով չբավարարված) մասը ... համարվում է չապահովված պահանջ, իսկ պարտատերը՝ չապահովված պարտատեր՝ չապահովված պահանջի չափով»:

Վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է վկայակոչված դրույթների վերլուծությանը՝ արտահայտելով հետևյալ դիրքորոշումը. «Օրենսդրի կողմից նման տարբերակված կարգավորում սահմանելու նպատակն է սնանկության վարույթի առկայության պայմաններում երաշխավորել գրավով ապահովված պարտատերերի և մյուս պարտատերերի իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: Այդ իսկ նկատառումով օրենսդիրը, գրավով ապահովված պարտատիրոջը հնարավորություն ընձեռելով կամովին ընտրելու իր պահանջների բավարարման եղանակը՝ շրջանցելով սնանկության վարույթը, կամ այդպիսի բավարարում ստանալ սնանկության վարույթի շրջանակներում, այդուհանդերձ, նախատեսել է որոշակի սահմանափակումներ: Այսպես՝ սնանկության վարույթի շրջանակներից դուրս իր պահանջների բավարարում ստանալու՝ գրավով ապահովված պարտատիրոջ՝ գրավով ապահովված պահանջների բավարարման իրավունքն օրենսդիրը սահմանափակել է գրավի արժեքի սահմաններով, ի տարբերություն քաղաքացիական շրջանառության բնականոն պայմանների, երբ գրավով ապահովված պարտատերն իրավունք ունի գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարն իր պահանջները բավարարելու համար բավարար չլինելու պայմաններում պակաս գումարն ստանալ պարտապանի այլ գույքից (<< քաղաքացիական օրենսգրքի¹⁰ 251-րդ հոդվածի 2-րդ կետ):

¹⁰ Ընդունվել է 05.05.1998թ.: Ուժի մեջ է մտել 01.01.1999թ.: Տե՛ս

Միաժամանակ, սնանկության վարույթի շրջանակներում գրավով ապահովված պարտավորության պարտատիրոջն իրավունք վերապահելով պահանջել իր՝ գրավով ապահովված պարտավորությունն առաջնահերթ բավարարել գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից, պահանջի բավարարումը գրավից ազատ գույքից օրենսդիրը սահմանափակել է այնքան, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին: Ընդ որում, գրավից ազատ գույքի հաշվին գրավով ապահովված պահանջատիրոջ պահանջները կարող են բավարարվել միայն որպես չապահովված պահանջ՝ գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից չբավարարված պահանջի մասով՝ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված ընդհանուր կարգով և պայմաններով»¹¹:

Թեև Օրենքը չի հստակեցնում, իսկ Վճռաբեկ դատարանի հիշատակված դիրքորոշումից բխում է, որ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարը գրավով ապահովված պահանջների համար անբավարար լինելու պայմաններում պակաս գումարը հնարավոր է ստանալ պարտապանի այլ գույքից՝ այնուամենայնիվ, նման մոտեցմանը պետք է վերաբերվել որոշակի վերապահմամբ: Մասնավորապես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 2-րդ կետի հա-

ՀՀՊՏ 1998.08.10/17(50):

¹¹ Տե՛ս, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/1873/02/14 քաղաքացիական գործով 28.12.2015թ. որոշումը:

մաճայն. «Եթե գրավ դրված գույքն իրացնելուց ստացված գումարը կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած գույքի արժեքը բավարար չէ գրավառուի պահանջները բավարարելու համար, նա իրավունք ունի պակաս գումարն ստանալու պարտապանի այլ գույքից, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով»: Այսինքն՝ պարտապանի գրավից ազատ գույքի հաշվին գրավով ապահովված պարտատիրոջ պահանջները կարող են բավարարվել միայն այն դեպքում, եթե գրավի պայմանագրով գրավառուի պատասխանատվությունը սահմանափակված չէ ապահովված իրավունքի առարկայի արժեքով: Հետևաբար, գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարը գրավով ապահովված պահանջների բավարարման համար չբավականացնելու դեպքում պարզման ենթակա է այն հարցը, թե արդյոք գրավի պայմանագրով բացառված չէ պարտապանի այլ գույքի հաշվին ապահովված պահանջների բավարարման հնարավորությունը:

Այսպիսով, գրավով ապահովված պահանջների բավարարման առումով օրենսդրորեն երաշխավորված է երկու եղանակ՝ պահանջների բավարարման ստորև ներկայացված առանձնահատկություններով.

Գրավով ապահովված պահանջների
բավարարման եղանակները

անանկության վարույթի
շրջանակներում

գրավով ապահովված պարտավորությունն առաջնահերթ բավարարվում է գրավադրված գույքի վաճառքից ստացված միջոցներից, իսկ դրանց անբավարարության դեպքում պարտապանի այլ գույքից՝ որպես չապահովված պահանջ, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով

պահանջի բավարարումը պարտապանի գրավից ազատ գույքից բոլոր դեպքերում սահմանափակվում է այնքանով, քանի դեռ գրավադրված գույքի արժեքն ավելի կամ հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջին

անանկության վարույթից
դուրս

գրավով ապահովված պահանջների բավարարման իրավունքը սահմանափակվում է գրավի արժեքի սահմաններով

§ 2. Ապահովված իրավունքի առարկայի իրացումը սնանկության վարույթում

Ապահովված իրավունքի առարկայի վաճառքը: Օրենքի 43-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ պարտատերերի ցանկում ընդգրկված ապահովված պարտատերը կարող է պահանջել՝ ապահովված պարտավորությունը առաջնահերթ կերպով բավարարել ապահովված իրավունքի առարկայի վաճառքից ստացված միջոցների հաշվին:

Հարկ է նշել, որ գործնականում որոշակի տարակարծությունների տեղիք է տալիս վկայակոչված դրույթում «կարող է պահանջել» արտահայտության օգտագործումը, քանի որ տպավորություն է ստեղծվում, որ այն ենթադրում է ապահովված պարտատիրոջ կողմից լրացուցիչ ակտիվ գործողություններ՝ ապահովված իրավունքի առարկայի վաճառքից ստացված միջոցների հաշվին ապահովված պահանջի բավարարման մասին պահանջի ներկայացում: Այնինչ նման մեկնաբանությունը համատեղելի չէ գրավի իրավունքի էության հետ, որն ինքնին ենթադրում է ապահովված իրավունքի առարկայի իրացման հաշվին ապահովված պահանջի բավարարման նախապատվության երաշխավորվածություն, իսկ նման պայմաններում պարտատիրոջ կողմից իր պահանջը՝ որպես ապահովված ներկայացնելը և դատարանի կողմից պարտատերերի ցուցակում ընդգրկելն արդեն իսկ վկայում են պարտատիրոջ նման կամահայտնության և պահանջի մասին: Մյուս կողմից, Օրենքի կարգավորումները բացառում են առանց ապահովված իրավունքի առարկայի իրացման գրավից ազատ գույքի հաշվին ապահովված պար-

տատիրոջ պահանջների չապահովված մասի բավարարման հնարավորությունը, որպիսի պայմաններում ներկայացվածից տարբերվող մոտեցումը ապահովված պահանջների բավարարումը կարող է արգելափակել:

Պարտապանի գույքի, այդ թվում՝ ապահովված իրավունքի առարկայի իրացման եղանակները սահմանված են Օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և դատարանի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով, իսկ նույն հոդվածի 1.1-րդ մասը սահմանում է, որ գույքի վաճառքի ծրագիրը պետք է ներառի պարտապանի ամբողջ գույքի, ներառյալ՝ պահանջի իրավունքների վերաբերյալ մանրամասն տեղեկություններ (անվանումները, նկարագրությունը, քանակը, հաշվեկշռային արժեքը), վաճառքի նախատեսվող ձևը, նախնական գնահատված արժեքները՝ ըստ գույքի տեսակի: Գույքի վաճառքի ծրագիրը պարտատերերի խորհրդի կամ ժողովի կողմից չհաստատվելու դեպքում կառավարիչն իրավունք ունի դիմելու դատարան և պահանջելու հաստատել գույքի վաճառքի ծրագիրը՝ կցելով պարտատերերի ժողովի կամ խորհրդի որոշումները կամ ժողովի կամ խորհրդի նիստի անցկացման անհնարինության (չկայացման) հիմքերը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պարտապանի գույքի վաճառքի ծրագրի հետ կապված հարցերին, արձա-

նագրել է, որ գույքի վաճառքի հաստատված ծրագիրն այն հիմքն է, որի հիման վրա պետք է իրականացվի պարտապանի գույքի վաճառքը և, հետևաբար, այն պետք է իրականացվի բացառապես հաստատված ծրագրին համապատասխան: Միաժամանակ, Վճռաբեկ դատարանը նշել է, որ դատարանը, ստանալով կառավարչի միջնորդությունը՝ գույքի վաճառքի ծրագիրը հաստատելու և այնուհետև գույքի վաճառքը թույլատրելու մասին, պետք է գնահատի գույքի վաճառքի ծրագրի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության պահանջներին, որից հետո գնահատի Օրենքով սահմանված ընթացակարգային նորմերի պահպանվածությունը¹²:

Պետք է նաև ընդգծել, որ պարտապանի գույքի վաճառքը, բացառությամբ Օրենքով սահմանված դեպքերի, կարող է տեղի ունենալ միայն պարտապանի լուծարման վարույթը սկսելուց հետո:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել հետևյալը.

¹² Տե՛ս, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴԴ/0006/04/16 սնանկության գործով 07.06.2019թ. որոշումը (ՀՀՊՏ 2019.10.18/72(1525).1 Հոդ.930.3):

պարտապանի գույքը սնանկության վարույթում վաճառվում է հրապարակային սակարկությունների կամ ուղղակի գործարքի միջոցով

գույքի վաճառքի ձևը որոշվում է գույքի վաճառքի ծրագրում

գույքի վաճառքը, բացառությամբ Օրենքով նախատեսված դեպքերի, կարող է իրականացվել բացառապես պարտապանի լուծարման վարույթը սկսելուց հետո

Վկայակոչված դրույթները կիրառելի են նաև ապահովված իրավունքի առարկայի իրացման գործընթացի նկատմամբ, քանի որ Օրենքն այդ առումով առանձնահատկություններ չի սահմանում: Այս տեսանկյունից պետք է նշել, որ Օրենքի փոփոխությունների նախագծի 59-րդ հոդվածում սահմանվել էին դրույթներ առ այն, որ ապահովված իրավունքի առարկան չի ներառվում գույքի վաճառքի ծրագրում և իրացվում է հրատապ ռեժիմով¹³: Եվ այս լուծումը առավել արդարացված էր թվում, քանի որ ապահովված իրավունքի առարկայի առաջնային շահառուն ապահովված պարտատերն է, իսկ դրա իրացման հապաղումը հիմնավորված չէ որևէ ողջամիտ շահով: Այնուամենայնիվ, Օրենքի փոփոխություններում դրանք տեղ չգտան:

Հարկ է նշել, որ Օրենքի փոփոխությունների արդյունքում վերջապես լուծում ստացավ պարտապանի և երրորդ անձի միաժամանակյա սնանկության դեպքում ապահովված

¹³ Նախագիծը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://www.e-draft.am/projects/1510/about>:

իրավունքի առարկայի իրացման հարցը: Այսպես, Օրենքի 43-րդ հոդվածի 10.2-րդ մասը սահմանում է. «Եթե պարտապանը և երրորդ անձ գրավատուն ճանաչվել են սնանկ, ապա սույն հոդվածի 10-րդ մասում նշված գույքի իրացումը կատարվում է պարտապանի սնանկության վարույթում, իսկ եթե գույքը ծանրաբեռնված է տարբեր պարտապանների սնանկության վարույթներով ապահովված պահանջներով, ապա այն իրացվում է սնանկության այն վարույթում, որտեղ այդ գույքով ապահովված իրավունքն առաջնային է: Սնանկության որևէ վարույթում գույքի իրացվելուց և ապահովված պահանջները բավարարելուց հետո պահանջների չափի և գույքի իրացման արժեքի տարբերությունը փոխանցվում է երրորդ անձի սնանկության վարույթի հատուկ հաշվին»:

Ինչ վերաբերում է պարտապանի գույքի, այդ թվում՝ ապահովված իրավունքի առարկայի իրացման գործընթացին, ապա հրապարակային սակարկություններով և ուղղակի գործարքով իրացումը կարգավորված է Օրենքի համապատասխանաբար 76-րդ և 77-րդ հոդվածներում, ինչպես նաև Արդարադատության նախարարի 12.03.2020թ. «Պարտապանին պատկանող գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու կարգը սահմանելու մասին» թիվ 116-Ն հրամանով¹⁴:

¹⁴ 01.12.2021թ. ուժի մեջ կմտնի Արդարադատության նախարարի 27.11.2020թ. «Հրապարակային սակարկությունների համար նախատեսված էլեկտրոնային կայքի միջոցով սնանկության վարույթում պարտապանին պատկանող գույքի վաճառքի իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 491-Ն հրամանը, որով ուժը կորց-

Հիշյալ համատեքստում ուշադրության են արժանի Օրենքի 76-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, որոնցից առաջինը սահմանում է գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին կառավարչի կողմից դատարան միջնորդություն ներկայացնելու պահանջ, որը, ի թիվս այլնի, պետք է պարունակի աճուրդի մեկնարկային գինը, իսկ երկրորդը նախատեսում է այդ միջնորդության դեմ դատարան յոթնօրյա ժամկետում գրավոր առարկություն ներկայացնելու և աճուրդի ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելու պարտատիրոջ իրավունքը՝ սնանկության հատուկ հաշվին գույքի վաճառքի իր կողմից առաջարկվող մեկնարկային գնի հինգ տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ վճարելու պայմանով: Ընդ որում, պարտատիրոջ մեկնարկային ավելի բարձր գին առաջարկելու մասին առարկությանը պետք է կցվի դեպոզիտի վճարումը հավաստող փաստաթուղթը և, եթե առարկություն են ներկայացրել մեկից ավելի պարտատերեր, ապա հրապարակային սակարկություններով գույքի իրացումը թույլատրվում է առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով:

Վկայակոչված կարգավորումներից բխում է հետևյալը.

1. պարտատերերը կառավարչի կողմից վաճառքի թույլտվություն տալու միջնորդության վերաբերյալ կարող են ներկայացնել գրավոր առարկություններ,

րած է ճանաչվելու Արդարադատության նախարարի 12.03.2020թ. թիվ 116-Ն հրամանը:

2. այդ առարկությունները կարող են ներկայացնել դատարանի կողմից միջնորդության կապակցությամբ որոշման կայացմանը նախորդած յոթնօրյա ժամանակահատվածում,

3. առարկությունում պետք է ներկայացվի առաջարկվող գույքի մեկնարկային գնից ավելի բարձր մեկնարկային գին,

4. պարտատերերը պետք է սնանկության հատուկ հաշվին վճարեն իրենց կողմից առաջարկվող մեկնարկային գնի հինգ տոկոսի, բայց ոչ ավելի, քան հինգ միլիոն դրամի չափով դեպոզիտ,

5. մեկից ավելի պարտատերերի կողմից առարկություն ներկայացվելու դեպքում հրապարակային սակարկություններով գույքի իրացումը թույլատրվում է առաջարկվող ամենաբարձր մեկնարկային գնով:

Հասկանալի է, որ թե՛ պարտապանի գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու մասին կառավարչի միջնորդությունը, թե՛ գույքի իրացումը ավելի բարձր մեկնարկային գնով իրացնելու պարտատիրոջ առարկությունը պետք է արժանանան դատարանի գնահատականին: Այս առումով Օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ կառավարչի միջնորդության դեմ առարկություն ներկայացնելու ժամկետի ավարտից հետո՝ եռօրյա ժամկետում, դատարանը կայացնում է հետևյալ որոշումներից մեկը՝

ա) գույքի վաճառքը թույլատրելու մասին՝ բավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն չի ներկայացրել դատարան.

բ) գույքի վաճառքը պարտատիրոջ առաջարկած գնով թույլատրելու մասին՝ չբավարարելով կառավարչի միջնորդությունը, եթե որևէ պարտատեր սույն հոդվածի երկրորդ մասով սահմանված ժամկետում և կարգով առարկություն է ներկայացրել դատարան¹⁵.

գ) կառավարչի միջնորդությունը մերժելու մասին, եթե կառավարչի կողմից չեն պահպանվել սույն օրենքով սահմանված պահանջները:

Միաժամանակ, տեղին է հիշատակել Վճռաբեկ դատարանի այն դիրքորոշումը, ըստ որի. «Օրենսդիրը ոչ միայն սահմանել է վաճառքի թույլտվության միջնորդության դեմ բերված առարկության հստակ ժամանակահատված, այլև նախատեսել է, որ առարկությունը պետք է վերաբերի կոնկրետ գույքի վաճառքի մեկնարկային գնին: Նշված վավերապայմաններին չբավարարող առարկությունները չեն կարող սույն իրավանորմի իմաստով գնահատվել որպես վաճառքի թույլտվության վերաբերյալ ներկայացված միջնորդության դեմ բերված առարկություն և դատարանի կողմից այդ կապակցությամբ չի կարող կիրառվել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետի կանոնը»¹⁶:

Ակնհայտ է, որ հիշատակված կարգավորումները կոչված են մի կողմից դատական վերահսկողության ներքո պահելու պարտապանի գույքի իրացման գործընթացի օրինա-

¹⁵ Օրենքում այս առումով վրիպակ է տեղ գտել, քանի որ նշվում է առարկության չներկայացվելու մասին:

¹⁶ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0111/04/16 սնանկության գործով 02.08.2019թ. որոշումը:

կանությունը, մյուս կողմից՝ երաշխավորելու պարտատերերի պահանջների բավարարման ավելի մեծ հնարավորություն բոլոր այն դեպքերում, երբ գույքի մեկնարկային գինը որևէ պատճառով որոշվել է շուկայական գնից ցածր տարբերակով:

Այնուամենայնիվ, պետք է նկատել, որ կառավարչի առաջարկած մեկնարկային գնից բարձր մեկնարկային գին առաջարկելու պարտատերերի ոչնչով չսահմանափակված հնարավորությունը կարող է չարաշահումների տեղիք տալ: Իհարկե, Օրենքի 76-րդ հոդվածի 4-րդ մասի կարգավորումը ունի որոշակի զսպող ազդեցություն, քանի որ, եթե պարտապանի գույքի վաճառքը թույլատրվել է պարտատիրոջ առաջարկած գնով, և գույքը այդ սակարկություններով չի վաճառվել, ապա պարտատիրոջ դեպոզիտ վճարած գումարը չի վերադարձվում: Սակայն դա բավարար համարվել չի կարող:

Այս պնդումը, առաջին հերթին, պայմանավորված է այն իրողությամբ, որ Օրենքը, ի տարբերություն սնանկության գործով կառավարչի, պարտատիրոջ համար չի նախատեսում ավելի բարձր մեկնարկային գին առաջարկելիս գույքի գնահատման ակտ ներկայացնելու պահանջ: Բացի այդ, պարտատիրոջ առաջարկած գնով գույքը չվաճառվելու դեպքում հաջորդ աճուրդի մեկնարկային գինը որոշվում է ոչ թե սնանկության գործով կառավարչի, այլ պարտատիրոջ առաջարկած մեկնարկային գնից նվազեցման միջոցով: Արդյունքում պարտատիրոջ կողմից չափազանց բարձր գին առաջարկված լինելու դեպքում պարտատերը, այդ թվում՝ ապա-

հովված, ստիպված է տևական ժամանակ սպասել աճուրդների շարքի իրականացման միջոցով դրա իրացվելի գնի սահմանմանը և նոր միայն ստանալ համապատասխան պահանջի բավարարում:

Ապահովված իրավունքի առարկան ի սեփականություն ստանալը: Օրենքը կարգավորել է ոչ միայն ապահովված իրավունքի առարկան վաճառելու գործընթացը, այլև սահմանել է հրապարակային սակարկություններից ապահովված իրավունքի առարկան իր կամ իր նշած անձի օգտին ի սեփականություն ստանալու հնարավորություն, որը լիովին համահունչ է գրավի իրավունքի բնույթին: Այս առումով հատկանշական է Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, ըստ որի. «Նման կարգավորումը բխում է ապահովված իրավունքի բնույթից, քանի որ պարտատերը, որը սնանկության վարույթում դարձել է պահանջատեր, պարտապանի հետ որոշակի քաղաքացիաիրավական՝ մասնավորապես պարտավորական հարաբերությունների մեջ մտնելիս ձեռնարկել է միջոցներ ապահովելու իր պահանջի կատարումը՝ հիմնական պարտավորության հետ միասին պարտապանի հետ մտնելով նաև գրավից ծագող հարաբերությունների մեջ: Վճռաբեկ դատարանը գտնում է, որ արժևորելով այն հանգամանքը, որ պահանջատերը (ապահովված իրավունքով պարտատերը) ի սկզբանե ձեռնամուխ է եղել իր պահանջի կատարումն ամբողջությամբ կամ մասամբ ապահովելու այլ միջոցներով, մասնավորապես՝ գրավով, օրենսդիրը նրա համար որոշակի գործիքակազմ է սահմանել իր պահանջի բավարարումը


հենց այդ ապահովված իրավունքի առարկայի հաշվին ստանալու համար՝ միաժամանակ նախատեսելով որոշակի պահանջներ այդ իրավունքի իրացման համար»¹⁷:

Քննարկվող հարցի հետ կապված հարաբերությունները կարգավորված են Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասում, որի համաձայն. «Եթե ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գինը հավասար է ապահովված պարտատիրոջ պահանջի գումարին կամ ցածր է դրանից, ապա պարտատերերի ցանկում ընդգրկված պարտատերն իրավունք ունի իր պահանջի կամ դրա մասի չափով դատարանի որոշմամբ որպես սեփականություն իր կամ իր նշած անձի օգտին ստանալու ապահովված իրավունքի առարկան՝ փոխհատուցելով այդ ապահովված իրավունքի առարկայի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ ապահովված իրավունքի առարկայի մեկնարկային գնի երեք տոկոսի, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկի չափով: Այդ դեպքում տվյալ պարտատիրոջ պահանջի չափը չի նվազեցվում ապահովված իրավունքի առարկայի պահպանման և փոխանցման ծախսերի և կառավարչի վարձատրության համար վճարված գումարի չափով»:

Վկայակոչված նորմի վերլուծությունից հետևում է, որ սնանկության վարույթում ապահովված իրավունքի առար-

¹⁷ Տե՛ս, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՔԴ/0462/04/16 սնանկության գործով 27.12.2019թ. որոշումը:

կան պարտատիրոջը կամ նրա նշած անձի օգտին ի սեփականություն կարող է հանձնվել, եթե.



ապահովված պարտատերը փոխհատուցում է այդ գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը՝ գույքի մեկնարկային գնի 3 %-ի, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկի չափով:

Հասկանալի է, որ մեկնարկային գինը պահանջի չափից ցածր լինելու դեպքում ապահովված պարտատիրոջ պահանջը պահպանվում է նվազեցված չափով: Ընդ որում, կախված նրանից, թե այդ պահանջը ունի նաև այլ գրավով ապահովում, թե ոչ՝ այդ պահանջը պահպանում է իր

կարգավիճակը կամ փոխակերպվում է չապահովված պահանջի:

Պետք է նշել, որ կառավարչի վարձատրությունը մեկնարկային գնի նկատմամբ հաշվարկելու պայմանը սահմանվել է Օրենքի փոփոխություններով: Մինչ այդ Օրենքում օգտագործվում էր «գրավի առարկայի արժեք» արտահայտությունը, որը գործնականում ընկալվում էր տարաբնույթ, ընդհուպ ներառելով գրավի առարկայի սկզբնական գնահատման արժեքը: Հենց հակասական մեկնաբանությունների պատճառով էլ Վճռաբեկ դատարանը ձեռնամուխ եղավ այդ արտահայտության իմաստի բացահայտմանը և հստակեցրեց, որ այն նույնանում է «չկայացած աճուրդում գույքի համար սահմանված մեկնարկային գին» հասկացության հետ¹⁸:

Օրենքի փոփոխություններով որոշակի փոփոխության ենթարկվեց նաև կառավարչի վարձատրության շեմը: Մասնավորապես, եթե նախկինում այն ենթակա էր վճարման հինգ տոկոսի չափով՝ առանց առավելագույն սահմանի, ապա ներկայումս կառավարչի վարձատրությունը ապահովված իրավունքի առարկան ի սեփականություն ստանալու դեպքում, ինչպես նշվեց վերևում, կազմում է գույքի մեկնարկային գնի երեք տոկոսը, բայց ոչ ավելի, քան նվազագույն աշխատավարձի 10 000-ապատիկի չափով:

¹⁸ Տե՛ս, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/0100/04/14 սնանկության գործով 17.01.2020թ. և թիվ ԵԱԴԴ/0018/04/16 սնանկության գործով 08.05.2020թ. որոշումները:

**Այս փոփոխության
հիմքում դրվել են
հետևյալ
հանգամանքները**

**ընդհանուր առմամբ նվազեցնել
սնանկության վարույթի
ծախսատարությունը**

**կառավարչի վարձատրությունը
տարբերակել ըստ ներդրված ջանքերի,
որոնք տվյալ դեպքում անհամեմատելի
նվազ են, քան գույքի իրացման
սովորական ընթացքի պայմաններում**

Միաժամանակ, հարկ է փաստել, որ այս ինստիտուտը չի ամրագրում մեկնարկային գինը պահանջի չափից ավել լինելու դեպքում գրավի առարկան ստանալու հնարավորություն: Այնինչ, նման լուծումը թույլ կտար ապահովված պարտատիրոջ կողմից մեկնարկային գնի և պահանջի չափի տարբերությունը վճարելու պայմանով առավել վաղ փուլերում հասնել պահանջի բավարարմանը՝ զգալիորեն կրճատելով նաև սնանկության վարույթի տևողությունը:

Ապահովված իրավունքի առարկան ի սեփականություն ստանալու հարցի քննարկման համատեքստում ուշադրության է արժանի նաև Օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասը, որի համաձայն. «Եթե պարտատերերի ցանկում ընդգրկված ա-

պահովված պարտատիրոջ պահանջն ապահովված է երրորդ անձի գույքով, ապա այդ անձն իրավունք ունի դադարեցնելու իր գույքով պահանջի ապահովումը՝ սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ փոխանցելով՝

1) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափը գերազանցելու դեպքում՝ ապահովված պահանջի, գույքի պահպանման և իրացման համար հաշվարկված ծախսերը.

2) գույքի առաջիկա իրացման համար գնահատված կամ մեկնարկային գինը հիմնական ապահովված պարտավորության արժեքի չափից պակաս լինելու դեպքում՝ վերջին չկայացած աճուրդի մեկնարկային գնի չափով:»:

Հիշատակված դրույթի հաշվառմամբ ստացվում է, որ Օրենքը մի կողմից ամրագրում է պարտատիրոջ՝ ապահովված իրավունքի առարկան ի սեփականություն ստանալու իրավունքը, իսկ մյուս կողմից երրորդ անձ գրավատուի համար նախատեսում է սնանկության հատուկ հաշվին որպես դեպոզիտ համապատասխան գումար փոխանցելու միջոցով գրավի իրավունքը դադարեցնելու հնարավորություն:

Արդյունքում մինչև Օրենքի փոփոխությունները օրենսդրական մակարդակում որոշակի չէր այն հարցը, թե այս իրավունքների միաժամանակյա իրականացման դեպքում դրանցից որին պետք է տրվեր նախապատվություն: Հարցն իր կարգավորումը ստացավ Օրենքի 43-րդ հոդվածի 10.1-րդ մասում, որը հասկանալի պատճառներով նման իրավիճակներում առաջնահերթություն է տալիս երրորդ անձ գրավատուի գրավի իրավունքը դադարեցնելու իրավունքին:

Ապահովված իրավունքի առարկայի գնահատումը: Օրենսդիրն ամրագրել է պարտապանի գույքի գնահատման վերաբերյալ որոշակի կարգավորումներ: Մասնավորապես, Օրենքի 57-րդ հոդվածի համաձայն. «Պարտապանի գույքի գնահատումն իրականացնում է կառավարիչը: Պարտապանի միջոցների հաշվին կառավարիչն իրավունք ունի հրավիրելու անկախ գնահատող պարտապանին պատկանող գույքի գնահատման համար՝ այդ մասին նախօրոք տեղյակ պահելով խորհրդին, իսկ այն ձևավորված չլինելու դեպքում՝ առավել մեծ պահանջներ ունեցող 5 հայտնի պարտատերերին»: Պարտապանի գույքի գնահատման անհրաժեշտության վերաբերյալ դրույթներ կան նաև Օրենքի այլ նորմերում, օրինակ՝ 75-րդ և 76-րդ հոդվածներում:

Հիշատակվածի համատեքստում հարկ է նկատել, սակայն, որ օրենսդիրն անկախ գնահատողի ծառայություններից օգտվելը, բացառությամբ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերի, թողել է կառավարչի հայեցողությանը: Եվ դա այն դեպքում, երբ պարտապանի գույքի, ներառյալ՝ ապահովված իրավունքի առարկայի անկախ գնահատումն արդարացիորեն համարվում է պարտատերերի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևորագույն երաշխիք¹⁹:

¹⁹ St' u **Караев К.Б.** Правовой статус конкурсных кредиторов при проведении конкурсного производства// Юрист.2009, № 4:

§ 3. Ապահովված իրավունքի առարկայի իրացումը սնանկության վարույթից դուրս

Մորատորիումը և գրավով ապահովված պահանջների նկատմամբ դրա գործողության բացառման կարգը: Սնանկության վարույթի կարևորագույն ինստիտուտներից է մորատորիումը կամ պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը: Այն պարտապանի վճարունակության վերականգման միջոցներից մեկն է, որի էությունը դրսևորվում է նրանում, որ այն արգելում է պարտապանի դրամական միջոցների օգտագործումը՝ պարտապանի ֆինանսական վիճակի բարելավման համար կազմակերպչական և տնտեսական միջոցառումներ իրականացնելու համար²⁰: Ըստ էության, նման դիրքորոշում է արտահայտվել նաև Վճռաբեկ դատարանի կողմից, որի համաձայն. «Պարտատերերի պահանջների բավարարման սառեցումը կամ մորատորիումը պարտապանի վճարունակության վերականգնման նպատակին հասնելու միջոցներից մեկն է: Այն առաջնահերթ ուղղված է պարտապանի գույքի էական նվազեցում թույլ չտալուն»²¹:

Մորատորիումի բովանդակությունը կազմող հիմնադրույթները թվարկված են Օրենքի 39-րդ հոդվածի 1-

²⁰ Տե՛ս և Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под. ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 1. – М.: Статут, 2019, էջ 680:

²¹ Տե՛ս, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015թ. և թիվ ԵԿԴ/5306/02/14 քաղաքացիական գործով 13.01.2016թ. որոշումները:

ին և 2-րդ մասերում, որոնք ընդհանուր առմամբ արգելում են պարտապանի պարտավորությունների՝ կամավոր կամ հարկադիր կարգով կատարման ցանկացած գործընթաց: Այս սահմանափակումները, ի թիվս այլնի, միտված են բացառելու պարտապանից գումարի բռնագանձման կամ գույք հանձնելու պահանջներով որևէ դատական գործի վարույթ, իսկ այդպիսի պահանջների առկայության դեպքում դրանք սնանկության վարույթում կենտրոնացնելուն²²:

Միաժամանակ պետք է արձանագրել, որ օրենսդիրը, այլ գերակա շահերի պաշտպանության նկատառումներից ելնելով, սահմանել է մորատորիումի գործողությունից բացառության դեպքեր: Մասնավորապես, Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մորատորիումի գործողությունը չի տարածվում՝

ա) ալիմենտների բռնագանձման վրա.

բ) միջանկյալ բաշխման ծրագրերով ժամանակավոր կառավարչի վարձատրության, վարչական և պարտապանի ընթացիկ գործունեության համար անհրաժեշտ այլ ծախսերի վրա.

գ) ապահովված իրավունք ունեցող պարտատիրոջ ապահովված իրավունքի առարկայի վրա, եթե դատարանը սույն օրենքով սահմանված կարգով պարտատիրոջը թույլատրել է դրա իրացումը արտադատական²³ կարգով.

²² Տե՛ս, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵՄԴ/1140/02/12 քաղաքացիական գործով 26.12.2013թ. և թիվ ԵԱԴԴ/0199/02/11 քաղաքացիական գործով 17.07.2015թ. որոշումները:

²³ Թեև այստեղ խոսվում է միայն արտադատական կարգով իրացման թույլտվություն տրված լինելու մասին, սակայն անհրաժեշտ է նկատի ունենալ, որ դատարանը ունի նաև դատական կարգով

դ) ի ապահովումն սնանկության գործընթացում գտնվող պարտապանի պարտավորությունների կատարման՝ երաշխիք կամ երաշխավորություն տված անձանց կողմից այդ երաշխիքի կամ երաշխավորության գծով դրամական կամ այլ բավարարում տալու կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործընթացի վրա: Ընդ որում, պարտապանի սնանկության գործընթացը չի ազդում ի ապահովումն պարտապանի պարտավորությունների կատարման երաշխիք կամ երաշխավորություն տված անձի՝ երաշխիքով կամ երաշխավորությամբ ստանձնած պարտավորությունների կատարման վրա.

ե) սույն օրենքի 40.1-ին հոդվածով նախատեսված դեպքերում.

զ) սույն օրենքի 40-րդ հոդվածի 3.1-ին մասով սահմանված դեպքում պարտապանի ստանձնած պարտավորությունների նկատմամբ.

է) պարտապանի կողմից իր հարկային պարտավորությունների աստիճանական մարման ժամանակացույցի կնքման գործընթացի նկատմամբ, եթե սնանկության վարույթի միակ պարտատերը հարկային մարմինն է:

Դժվար չէ նկատել, որ ապահովված իրավունքի առարկայի իրացումը մորատորիումի գործողությունից դուրս է գալիս ոչ թե իրավունքի ուժով, այլ եթե առկա է ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահով-

սնանկության վարույթից դուրս գույքի իրացում թույլատրելու լիազորություն, որպիսի պայմաններում մորատորիումի գործողությունը ևս բացառվում է:

ված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու մասին դատարանի որոշում:

Օրենքը 39.1-39.2-րդ հոդվածներում սահմանել է նման խնդրանքով դատարան դիմելու հիմքերը, կարգը, ինչպես նաև ներկայացված դիմումի քննության կարգը: Մասնավորապես, պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացում թույլատրելու խնդրանքով դատարան դիմելու իրավունք ունի գրավով ապահովված պարտատերը: Ըստ որում, պարտատերը կարող է հայցել արտադատական կարգով իրացման թույլտվություն միայն այն դեպքում, երբ նման համաձայնություն ամրագրված է պարտապանի հետ կնքված պայմանագրում: Մյուս կողմից, իհարկե, նման համաձայնության առկայությունը չի սահմանափակում գրավով ապահովված պարտատիրոջ հնարավորությունը՝ դատարանից հայցելու դատական կարգով իրացման թույլտվություն:

Անկախ նրանից, թե գրավով ապահովված պարտատերը դատարանից խնդրում է ապահովված իրավունքի առարկան դատական, թե արտադատական կարգով իրացնելու թույլտվություն՝ նման դիմում ներկայացնելու համար Օրենքը սահմանել է մեկամսյա ժամկետ, որը հաշվարկվում է սնանկության մասին հայտարարություն տալու օրվանից: Ընդ որում, Օրենքը կարգավորել է նաև դիմումին ներկայացվող պահանջները՝ սահմանելով, որ այն պետք է ներկայացվի պահանջի ներկայացման համար սահմանված կանոններով: Ըստ էության, նման կարգավորումը բխում է նաև այն իրողությունից, որ, Օրենքի 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ապահովված իրավունքի առարկայի արտադատական

իրացման մասին դիմումը մերժվելու դեպքում դիմումն ընդունվում է որպես սույն օրենքի 46-րդ հոդվածով ներկայացված պահանջ:

Գործնական հետաքրքրություն է ներկայացնում այն հարցը, թե արդյոք գրավով ապահովված պարտատերը ապահովված իրավունքի առարկայի իրացման գործընթացը կարող է սնանկության վարույթից դուրս բերել մասնակի: Այլ կերպ ասած՝ պահանջը մի քանի գրավի առարկաններով ապահովված լինելու դեպքում արդյոք ապահովված պարտատերը կարող է դրանցից ոչ բոլորի համար ստանալ սնանկության վարույթից դուրս իրացնելու թույլտվություն, իսկ մնացած մասի իրացումը իրականացվի սնանկության վարույթում:

Գրավով ապահովված պահանջների բավարարման եղանակների և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ զուգորդված տարբերակով այդ եղանակների կիրառումն օրենսդիրը բացառել է, իսկ պահանջների բավարարման եղանակի ընտրությամբ գրավով ապահովված պարտատերը անվերապահ համաձայնություն է տալիս այդ եղանակի ինչպես առավելություններին, այնպես էլ հնարավոր անցանկալի հետևանքներին: Նման հետևանք է նաև սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացման դեպքում դրա արժեքից ավել պահանջի բավարարման սահմանափակվածությունը:

Վկայակոչված մոտեցումների լույսի ներքո ակնհայտ է, որ ապահովված իրավունքի առարկաների մի մասի դուրսբե-

րումը, իսկ մյուս մասի պահպանումը սնանկության վարույթում հնարավոր չէ:

Ապահովված պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու մասին դիմումը քննարկվում է առանց դատական նիստ հրավիրելու կամ դատական նիստում՝ կախված այն հանգամանքից, թե դրա դեմ ներկայացվել է առարկություն, թե՛ ոչ:

Այսպես, Օրենքի 39.2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Դատարանը, ստանալով ապահովված պարտատիրոջ դիմումը, դիմումի օրինակը երկու աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է պարտապանին և կառավարչին, որոնք դիմումի օրինակն ստանալուց հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, կարող են հայտնել գրավոր դիրքորոշում դիմումի կապակցությամբ»: Եթե պարտապանի կամ կառավարչի կողմից հինգ աշխատանքային օրվա ընթացքում դիրքորոշում չներկայացվելու կամ ներկայացված դիրքորոշմամբ չառարկվելու և դիմումը մերժելու հիմքերի բացակայության դեպքում դատարանն այդ ժամկետին հաջորդող մեկշաբաթյա ժամկետում կայացնում է որոշում ապահովված պարտատիրոջ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքների առարկայի իրացում թույլատրելու մասին, իսկ առարկություն ներկայացվելու դեպքում՝ առարկությունը ստանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, դատական նիստ է հրավիրում, որի արդյունքում դատարանը որոշում է պահանջի օրինականությունը, չափը, առաջնահերթությունը և ապահովվածությունը:

Դատարանը մերժում է գրավով ապահովված պարտատիրոջ դիմումը, եթե

1) ապահովված պարտատերը չունի արտադատական կարգով գույքն իրացնելու իրավունք²⁴.

2) առանց ապահովված իրավունքի առարկայի օգտագործման պարտապանի ֆինանսական առողջացման ծրագիրը չի կարող իրականացվել, պայմանով, որ ապահովված պարտատիրոջը տրամադրվել է համարժեք պաշտպանություն, որի վերաբերյալ կնքվել է պայմանագիր.

3) ապահովված պարտատիրոջ պահանջի քննությունը ենթակա է կասեցման:

Հարկ է նկատել, որ ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրացնելու հնարավորությունը դատարանի որոշմամբ թույլատրելու կարգավորումը Օրենքում տեղ է գտել 17.06.2016թ. ընդունված ՀՕ-105-Ն օրենքով²⁵ կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում, իսկ մինչ այդ գործող խմբագրությամբ Օրենքի 39-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի համաձայն՝ մորատորիումի գործողությունը չէր տարածվում՝ գրավով ապահովված պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալու կամ նրանց՝ գրավով ապահովված պահանջների բավարարման համար ցանկացած գործարքի կամ դրա կատարմանն ուղղված ցանկացած գործողության կամ գործըն-

²⁴ Օրենքում այս առումով մերժման հիմք է դիտարկվել միայն արտադատական կարգով գույքի իրացման իրավունքի բացակայությունը: Այնինչ, մերժման հիմք կարող է լինել ոչ միայն այդ հանգամանքը, այլև գրավի իրավունքի ծագած չլինելու կամ դադարած լինելու հանգամանքները և այլն:

²⁵ Ուժի մեջ է մտել 23.07.2016թ.: Տե՛ս ՀՀՊՏ 2016.07.13/54(1234) Հոդ.650:

թացի վրա, եթե ապահովված պարտատերը մորատորիում չտարածելու մասին ծանուցել է դատարանին:

Այսինքն՝ մինչև 17.06.2016թ. ընդունված ՀՕ-105-Ն օրենքի ուժի մեջ մտնելը օրենսդրական մակարդակում որպես ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրացնելու միակ պայման օրենսդիրը դիտարկում էր ապահովված պարտատիրոջ կողմից մորատորիում չտարածելու մասին դատարանին ներկայացված ծանուցումը:

Այսուհանդերձ, դատական պրակտիկան զարգացել էր այլ ուղղությամբ՝ պարտադիր համարելով նաև այդ առնչությամբ համապատասխան դատական ակտի կայացումը, քանի որ նախ՝ այդպիսի ծանուցմամբ անձն ակնկալում էր որոշակի իրավական և փաստական հետևանքների առաջացում, որոնք ինքնին, միայն դատարանին ծանուցելու փաստի ուժով չէին կարող առաջանալ, քանի որ առկա էր դրանց իրավաչափության գնահատման և արդյունքում մերժման կամ բավարարման մասին որոշման կայացման անհրաժեշտություն: Եվ երկրորդ՝ սնանկության վարույթի առանձնահատկությամբ պայմանավորված, մորատորիումի գործողությունը չտարածելու մասին դատարանին ծանուցած պարտատերն ակնկալում էր նաև ապահովված առարկայի նկատմամբ կիրառված սահմանափակումների վերացում, եթե այդպիսիք կիրառվել են, որն էլ իր հերթին կրկին ենթադրում է դատական ակտի կայացում՝ որոշման ձևով:

Բացի այդ, նշված եզրահանգումն առավել կարևոր էր այն պարագայում, երբ մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցմամբ ակնկալվող հետևանքները շոշափում էին երրորդ անձանց իրավունքները, քանի որ այդ

դեպքում առաջանում էր տարբեր անձանց իրավունքների և իրավական շահերի միջև հավասարակշռության ապահովման խնդիր, որն առանց դատական ակտի կայացման հնարավոր չէ իրականացնել: Այդ իսկ պատճառով օրենսդիրը սահմանել է մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցումը դատարանին ներկայացնելու պարտականություն:

Շարադրվածի հիման վրա Վճռաբեկ դատարանը արդարացիորեն արձանագրել է, որ ապահովված պարտատիրոջ կողմից դատարանին ծանուցելու պահանջը չէր կարող ինքնանպատակ լինել և դատարանի դերն այդ հարցում չէր կարող սահմանափակվել միայն ծանուցումն ի գիտություն ընդունելով, այլ դատարանը պետք է մորատորիումի գործողությունը չտարածելու մասին ծանուցման վերաբերյալ կայացնել դատական ակտ՝ ապահովելով անձի արդար դատաքննության իրավունքի իրացումը, այդ թվում՝ անձի դատական ակտի բողոքարկման իրավունքը²⁶: Ընդ որում, նման եզրահանգման համար Վճռաբեկ դատարանը հիմք է ընդունել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված այն հիմնադրույթը, որ «դատարան» եզրույթին բնորոշ հիմնական հատկություններից է ներկայացված հայցին վերաբերող բոլոր փաս-

²⁶ Տե՛ս, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0078/04/15 քաղաքացիական գործով 20.07.2017թ. որոշումը:

տական և իրավական խնդիրների հետ կապված պարտադիր որոշում կայացնելու հնարավորությունը²⁷:

Այսպիսով, ակնհայտ է, որ ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրացնելու հնարավորությունը դատական ակտի հիման վրա իրականացնելու կարգավորումը Օրենքում նախատեսելու դրույթը միայն ամրապնդել և կատարելագործել է դատական պրակտիկայում որդեգրված մոտեցումները:

Միաժամանակ, ողջ շարադրվածի համատեքստում պետք է նշել, որ ապահովված իրավունքի առարկայի սնանկության վարույթից դուրս իրացման վերաբերյալ ներկայացված վերլուծությունը հավասարապես կիրառելի է նաև այն դեպքերի համար, երբ որպես գրավատու հանդես է գալիս երրորդ անձը: Այլ կերպ ասած՝ երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրացնելու համար անհրաժեշտ է դատարանի համապատասխան որոշում, այլապես այդ գույքը Օրենքի 47-րդ հոդվածի ուժով դիտարկվում է պարտապանի գույք և դրա նկատմամբ ևս տարածվում է մորատորիումի գործողությունը²⁸:

Սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացման եղանակները: Սնանկության

²⁷ Տե՛ս, օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Բենթհենը ընդդեմ Նիդերլանդների գործով 23.10.1985թ. վճիռը, կետ 40 և Ռոլֆ Գուստաֆսոնը ընդդեմ Շվեդիայի գործով 01.07.1997թ. վճիռը, կետեր 45-46:

²⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0469/02/14 քաղաքացիական գործով 17.07.2015թ. որոշումը:

վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացումը հնարավոր է երկու կարգով՝ դատական և արտադատական:

Դատական կարգով ապահովված իրավունքի առարկայի իրացումը իրականացվում է առանձին քաղաքացիական գործի շրջանակում, որի արդյունքում բռնագանձում տարածելու մասին դատական ակտը կատարվում է սնանկության գործի շրջանակներում՝ Օրենքով սահմանված կարգով:

Ապահովված իրավունքի առարկայի արտադատական իրացման հետ կապված հարաբերությունները գրեթե կարգավորված չեն Օրենքում, հետևաբար դրանց նկատմամբ, ներառյալ՝ ապահովված իրավունքի առարկայի բռնագանձման եղանակների հետ կապված կիրառելի են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի կանոնները: Այս առումով Վճռաբեկ դատարանը նշել է. «Արտադատական կարգի կիրառման դեպքում գրավի առարկան իրացվում է ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների, իսկ դատական կարգով բռնագանձման դեպքում՝ հրապարակային սակարկությունների միջոցով: Երկու դեպքում էլ գրավատուի և գրավառուի համաձայնությամբ կարող է սահմանվել այլ կարգ: ... Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ եթե սնանկության վարույթում սնանկ ճանաչված պարտապանի պարտավորությունն ապահովված է գրավով, ապա միայն «Սնանկության մասին» ՀՀ օրենքը գործել չի կարող, քանի որ գրավի համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված են այլ

առանձնահատկություններ, որոնք պետք է հաշվի առնվեն սնանկության վարույթի ընթացքում»²⁹:

Նման պայմաններում քննարկման կարիք ունի Օրենքի փոփոխություններով ապահովված իրավունքի առարկայի իրացման առումով սահմանված նորամուծությունը: Մասնավորապես, Օրենքի 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Ապահովված իրավունքի առարկան արտադատական կարգով իրացնելու իրավունք ունեցող ապահովված պարտատերը երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկան իրացնում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով, իսկ պարտապանին պատկանող ապահովված իրավունքի առարկան կարող է իրացնել բռնագանձման ծանուցումը պարտապանին պատշաճ ձևով ուղարկելուց անմիջապես հետո: Ապահովված պարտատերը բռնագանձման ծանուցման օրինակներն ուղարկում է նաև դատարան և կառավարչին»:

Վկայակոչված դրույթի առավել ուշագրավ շեշտադրումն այն է, որ միայն երրորդ անձ գրավատուի դեպքում է Օրենքը պահանջում պահպանել ծանուցումից հետո երկամսյա ժամկետը: Նման կարգավորման հիմքում դրված է այն տրամաբանությունը, որ բռնագանձման ծանուցումը հանձնելուց հետո մինչև գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված երկամսյա ժամկետը նպատակ է հետապնդում ապահովել գրավատուի սեփականության իրավունքի պահպանումը և

²⁹ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴ1/0006/04/16 սնանկության գործով 07.06.2019թ. որոշումը:

այդ ընթացքում երաշխավորում է գրավով ապահովված պարտավորությունը կատարելու միջոցով գրավի դադարման հնարավորությունը: Այնինչ, հասկանալի պատճառներով նման հնարավորության երաշխավորումը իմաստազուրկ և անիրագործելի է պարտապան-գրավատուի դեպքում:

Կառավարչի դերակատարումը սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացման գործընթացում: Օրենքի փոփոխություններով ամրագրվեց պահանջ, ըստ որի՝ ապահովված իրավունքի առարկայի իրացումից հետո գրավով ապահովված պարտատերը պարտավոր է մեկշաբաթյա ժամկետում պատշաճ ձևով ծանուցել կառավարչին ապահովված իրավունքի առարկայի իրացման օրվա և գնի, ապահովված պարտավորության մարման չափի, ինչպես նաև առկայության դեպքում՝ ապահովված իրավունքի առարկայի իրացման արժեքի և ապահովված պահանջի տարբերության չափի, իսկ պարտավորությունը լրիվ մարված չլինելու դեպքում՝ պարտքի մնացորդի մասին: Ընդ որում, բոլոր այն դեպքերում, երբ ապահովված իրավունքի առարկայի իրացման արժեքն ավելի մեծ է ապահովված պարտատիրոջ պահանջից, ապա ապահովված պարտատերն ապահովված իրավունքի առարկան իրացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, պարտավոր է իրացման արժեքի և ապահովված պահանջի տարբերության չափով գումարը փոխանցել սնանկության հատուկ հաշվին, իսկ երրորդ անձ գրավատուին պատկանող ապահովված իրավունքի առարկայի իրացման դեպքում՝ երրորդ անձ գրավատուին:

Հիշատակված դրույթները կարելի է համարել կարևորագույն քայլ սնանկության վարույթից դուրս ապահովված իրա-

վունքի առարկայի իրացման գործընթացում կառավարչի դերակատարումը հստակեցնելու և սնանկության վարույթի մասնակիցների շահերը պաշտպանելու առումով³⁰: Արդյունքում, մի դեպքում կառավարչի դերակատարումը կարող է դրսևորվել ապահովված առարկայի իրացման գործընթացի օրինականությունը ստուգելու, իսկ մյուս դեպքում ստացված միջոցներից սնանկության հատուկ հաշվին գումար փոխանցելու պահանջ ներկայացնելու միջոցով:

³⁰ Կառավարչի գործառույթի վերլուծությանը Վճռաբեկ դատարանը անդրադարձել է թիվ ԵԱԴԴ/0100/04/17 սնանկության գործով 25.02.2020թ. որոշմամբ:

§ 4. Ապահովված իրավունքի առարկայի վերադարձը սնանկության վարույթ

Դատարանի կողմից ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթից դուրս իրացնելու հնարավորություն տրվելու դեպքում երբեմն ստեղծվում էին իրավիճակներ, երբ պարտապանի բոլոր գույքերը վաճառելուց և գումարները բաշխելուց հետո ապահովված իրավունքի առարկան դառնում էր պարտապանի միակ գույքը, որը դեռևս իրացված չէ կամ սնանկության վարույթում չկան այդ մասին տեղեկություններ:

Նման դեպքերում ակնհայտ էր, որ մի կողմից սնանկության վարույթի շարունակումը դառնում էր առարկայազուրկ, քանի որ մինչև ապահովված առարկայի իրացումը դրա շրջանակներում այլևս չկան կատարման ենթակա գործողություններ, իսկ մյուս կողմից դատարանը և կառավարիչը չունեին գրավով ապահովված պարտատիրոջը ապահովված իրավունքի առարկան իրացնելուն հարկադրելու որևէ գործիքակազմ: Միևնույն ժամանակ, սնանկության վարույթի ավարտը կարող էր խնդրահարույց լինել առնվազն հետևյալ առումներով.


ապահովված իրավունքի առարկան
ավելի բարձր գնով, քան գրավով
ապահովված պահանջների չափն է,
իրացվելու դեպքում այդ տարբերությունը
ենթակա է փոխանցման սնանկության
հատուկ հաշվին և պետք է ուղղվի դեռևս
չբավարարված չապահովված
պահանջների մարմանը

պարտապանի լուծարմամբ սնանկության
վարույթի ավարտը հիմք է պարտավորության
դադարման համար և հանգեցնում է
ապահովված իրավունքի առարկայի
անիրացվելիության

Այս մտահոգությունները փարատելու համար Օրենքի փոփոխություններում անդրադարձ կատարվեց նաև սնանկության վարույթից դուրս բերված ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթ վերադարձնելու հարաբերություններին: Մասնավորապես, Օրենքի 75-րդ հոդվածի 2.1-րդ մասը սահմանում է, որ եթե սույն օրենքի 39.1-ին հոդվածով սահմանված կարգով պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու մասին որոշման առկայության դեպքում ապահովված պարտատերը դեռևս չի սկսել ապահովված իրավունքի առարկայի իրացման, այդ թվում՝ դատական բռնագանձման գործընթաց, իսկ պարտապանը չունի գույք, և առկա են դեռևս չբավարարված պահանջներ, ապա կառավարիչը վեր-

ջին գույքի իրացումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, դիմում է դատարան՝ ապահովված իրավունքի առարկան վաճառելու միջնորդությամբ:

Այլ կերպ ասած՝ սնանկության վարույթից դուրս բերված ապահովված իրավունքի առարկան սնանկության վարույթ վերադարձնելու կամ սնանկության վարույթի շրջանակներում վաճառելու համար անհրաժեշտ է հետևյալ պայմանների միաժամանակյա առկայությունը.



Ակնհայտ է, որ այս լուծումը կարող է հավասարակշռություն ստեղծել սնանկության վարույթի մասնակիցների իրավունքների և օրինական շահերի միջև, իսկ դատարանին հնարավորություն տալ՝ ապահովելու արդյունավետ դատական ղեկավարում:

§ 5. Ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխումը

Մնանկության վարույթում ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխումը: Օրենքի 80-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքից (օտարումից) ստացված (փոխհատուցված) միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ՝ կառավարչի կողմից հաստատված և սույն հոդվածով սահմանված կարգով ընդունված (չառարկված) միջանկյալ բաշխման ծրագրին համապատասխան: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, ինչպես նաև կառավարչի վարձատրությունը:

Օրենքի 43-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ եթե ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցները գերազանցում են համապատասխան ապահովված պահանջի գումարը, ապա գերազանցող գումարի մասով այդ միջոցների նկատմամբ տարածվում է մորատորիում, և այդ միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված հերթականությամբ, իսկ եթե ապահովված իրավունքի առարկան այլ անձի սեփականություն է՝ փոխանցվում են այդ անձին:

Վերոհիշյալ նորմերի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը էականորեն տարբերվող մոտեցումներ է ցուցաբերել չապահովված և ապահովված պահանջների բավարարմանն ուղղված միջոցների բաշխման հարցում: Այսպես, եթե չապահովված պահանջների բավարարման հերթականության մեջ առաջնահերթության կարգով բավարարվում են կառավարչի վարձատրությունը և վարչական ծախսերը, այնուհետև պահանջները՝ ըստ հերթերի, ապա պարտապանի պարտավորությունների դիմաց գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից արտահերթ վճարվում են գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, որից հետո բավարարվում է գրավով ապահովված պահանջը: Այսինքն՝ քանի դեռ չեն վճարվել պարտապանի գրավադրված գույքի իրացումից ստացված միջոցներից գույքի պահպանման և փոխանցման հետ կապված ծախսերը, կառավարչի վարձատրությունը, ամբողջությամբ չեն բավարարվել ապահովված պարտատիրոջ պահանջները, այլ պահանջների բավարարում կամ ծախսերի հատուցում չի կարող իրականացվել³¹:

Օրենսդիրն այս կերպ, փաստորեն, հնարավորինս ապահովել է ապահովված իրավունքի առարկայի իրացման և

³¹ Տե՛ս, օրինակ՝ Վճռաբեկ դատարանի թիվ ԱՐԱԴ/0010/04/15 սնանկության գործով 25.03.2019թ. և թիվ ԵԿԴ/0126/04/15 սնանկության գործով 17.04.2019թ. որոշումները:

դրանով ապահովված պահանջի բավարարման միջև պատճառահետևանքային կապը՝ երաշխավորելով գրավի ինստիտուտի արդյունավետությունը:

Սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված միջոցների բաշխումը: Սնանկության վարույթից դուրս ապահովված իրավունքի առարկայի իրացման արդյունքում ստացված միջոցների բաշխման հետ կապված հարաբերություններն Օրենքում չեն ստացել մանրամասն կարգավորում այն տրամաբանությամբ, որ մորատորիումի գործողության բացառումը ամբողջապես կիրառելի է դարձնում քաղաքացիական իրավունքի գրավի ինստիտուտի կարգավորումները, և Օրենքը սկսում է գործել այն պահից, երբ նման իրացման արդյունքում ձևավորվում են ազատ միջոցներ, որոնք կարող են ուղղվել այլ պարտատերերի պահանջների բավարարմանը:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Գրավ դրված անշարժ գույքի, տրանսպորտային միջոցի, բանկային հաշվի, դեպոզիտի (ավանդի), ինչպես նաև արժեթղթի իրացումից ստացված գումարից կամ գրավառուին կամ նրա նշած անձին ի սեփականություն անցած համապատասխան գույքի արժեքից այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո բավարարվում են գրավառուի՝ գրավով ապահովված պահանջները», իսկ ՀՀ

քաղաքացիական օրենսգրքի 233-րդ հոդվածում սահմանված է գրավով ապահովված պահանջի ծավալը: Մասնավորապես, այդ պահանջը ներառում է տոկոսները, տուժանքը, կատարման ժամկետի կետանցով պատճառված վնասների, ինչպես նաև գրավ դրված գույքը պահելու, պահպանելու, դրա վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար գրավառուի կատարած կամ կատարվելիք ծախսերի, ներառյալ՝ գրավի առարկան իրացնելու հետ կապված հարկերի գումարների հատուցումը, որոնք գրավառուն պարտավոր է վճարել որպես գրավատուի հարկային գործակալ: Ընդ որում, ի տարբերություն ընդհանուր կանոնի, երբ գրավառուն իր պահանջի ծավալը հաշվարկում է մինչև բավարարման պահը, սնանկության դեպքում հիմք է ընդունվում դատարանի կողմից հաստատված պահանջի չափը:

Միևնույն ժամանակ Օրենքի 39.3-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ապահովված իրավունքի առարկայի իրացման արժեքն ավելի մեծ է ապահովված պարտատիրոջ պահանջից, ապա ապահովված պարտատերն ապահովված իրավունքի առարկան իրացնելուց հետո՝ 10-օրյա ժամկետում, պարտավոր է իրացման արժեքի և ապահովված պահանջի տարբերության չափով գումարը փոխանցել սնանկության հատուկ հաշվին, իսկ երրորդ անձ գրավատուին պատկանող ապահովված իրավունքի առարկայի իրացման դեպքում՝ երրորդ անձ գրավատուին:

Ապահովված իրավունքի առարկայի արժեքից կամ դրա իրացումից ստացված միջոցներից

վճարվում են գրավ դրված գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը

բավարարվում են գրավով ապահովված պարտատիրոջ պահանջը՝ դատարանի կողմից հաստատված չափով

գրավով ապահովված պարտատիրոջ պահանջը գերազանցող մասը ուղղվում է սնանկության հատուկ հաշիվ կամ երրորդ անձին՝ կախված այն հանգամանքից, թե ով է եղել գրավատուն

§ 6. Երրորդ անձ գրավատուն սնանկության վարույթում

Առանձնակի ուշադրության կարիք ունեն երրորդ անձ գրավատուի կարգավիճակի հետ կապված հարցերը, քանի որ նախևառաջ սնանկության վարույթի ընթացքի մասին երրորդ անձ գրավատուին տեղեկացնելու մասին իրավակիրառ պրակտիկայում տևական ժամանակ չկար միասնական մոտեցում: Եվ դա այն դեպքում, երբ երրորդ անձ գրավատուն իր գույքով կրում է պարտապանի պարտավորությունների համար պատասխանատվություն:

Հիշյալ համատեքստում առաջին կարևորագույն քայլը կատարվեց Սահմանադրական դատարանի կողմից, որը, հիմք ընդունելով սեփականատիրոջ իրավունքների ապահովման և արդյունավետ պաշտպանության իրավակարգավորումների առանձնակի կարևորությունը, արձանագրեց, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ և երրորդ պարբերություններում «պարտապան» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակությունից հետևում է, որ «պարտապան» եզրույթը վերաբերում է ոչ միայն պարտապան-գրավատուին, այլ նաև տվյալ իրավահարաբերություններում հանդես եկող երրորդ անձ գրավատուին³²:

Չնայած հիշատակված մոտեցման կիրառելիությանը նաև սնանկության վարույթի նկատմամբ՝ գործնականում այս

³² Տե՛ս Սահմանադրական դատարանի 19.07.2016թ. թիվ ՍԴՈ-1294 որոշումը:

խնդիրը շարունակում էր տեղ գտնել: Արդյունքում Վճռաբեկ դատարանը արդեն սնանկության վարույթի առնչությամբ արդարացիորեն ձևավորեց հետևյալ սկզբունքային դիրքորոշումը. «Թեև «Սնանկության մասին» ՀՀ օրենքն ուղղակիորեն չի պարտավորեցնում սնանկության գործով կառավարչին՝ ապահովված պահանջների դեպքում ծանուցելու նաև երրորդ անձանց, ում գույքով է ապահովված համապատասխան պահանջը, իսկ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ³³ հոդվածը նախատեսում է միայն կառավարչի, պարտապանի և պարտատերերի կողմից պահանջների նախնական ցուցակի դեմ առարկություն ներկայացնելու հնարավորություն, այդուհանդերձ անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ երրորդ անձը (մասնավորապես գրավատուն) պետք է իրական հնարավորություն ունենա տեղեկացված լինելու ներկայացված պահանջի մասին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առարկություն՝ նկատի ունենալով, որ ապահովված պահանջի հաստատումն ուղղակիորեն առնչվում է երրորդ անձի սեփականության իրավունքին և այդ իրավունքի դատական պաշտպանությանը»³⁴:

Զարգացնելով իր մոտեցումը՝ մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանն արձանագրեց հետևյալը. «Եթե սնանկ ճանաչ-

³³ Հավանաբար նկատի է առնվել Օրենքի 46-րդ հոդվածը, քանի որ 43-րդ հոդվածում այսպիսի կարգավորում առկա չէ:

³⁴ Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԵՇԴ/0072/04/17 սնանկության գործով 04.10.2018թ. որոշումը (ՀՀՊՏ 2019.04.10/23(1476).1 Հոդ.277.26):

ված պարտապանի պարտավորությունն ապահովված է երրորդ անձ գրավատուին պատկանող գույքի գրավով, ապա վերջինս ոչ միայն պետք է իրապես տեղեկացվի պահանջների ներկայացման և հաստատման ընթացակարգի, այլ նաև իր գույքի վաճառքին վերաբերող գործընթացի մասին, քանի որ հակառակ մոտեցման պարագայում ուղղակիորեն սահմանափակվում են երրորդ անձ գրավատուի սեփականության և դատական պաշտպանության իրավունքները, այդ թվում՝ վերջինս զրկվում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված իր իրավունքից օգտվելու իրական հնարավորությունից»³⁵:

Այսպիսով՝ սնանկության վարույթում իրականացվող գործընթացների մասին երրորդ անձ գրավատուի տեղեկացումը բխում է նրա սեփականության և դատական պաշտպանության իրավունքները երաշխավորելու անհրաժեշտությունից: Ընդ որում, այստեղ կիրառելի է Սահմանադրական դատարանի այն դիրքորոշումը, որ օրենսդիրը պետք է նախատեսի պարտապանի արդյունավետ ծանուցման ընթացակարգ, որը գործնականում կբացառի սնանկության գործընթացի մասին շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները³⁶:

³⁵ Առավել մանրամասն տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԱՎԴԻ/0006/04/16 սնանկության գործով 07.06.2019թ. որոշումը (ՀՀՊՏ 2019.10.18/72(1525).1 Հոդ.930.3):

³⁶ Տե՛ս Սահմանադրական դատարանի 27.01.2015թ. թիվ ՍԴՈ-1189 որոշումը:

Ի լրումն շարադրվածի՝ անհրաժեշտ է քննարկվող հարցին մոտենալ գրավի իրավունքի էության տեսանկյունից: Այս առումով մասնագիտական գրականության մեջ արդարացիորեն տեսակետ է արտահայտվել այն մասին, որ գրավը պարտավորաիրային ապահովման միջոց է³⁷: Այլ կերպ ասած՝ երրորդ անձ գրավատուն համապատասխան պահանջի մասով ունի պարտապանին հավասարեցված կարգավիճակ, որպիսի պայմաններում Օրենքի՝ պարտապանին առնչվող կարգավորումների ուժով նա ունի ինչպես սնանկության վարույթի ընթացքի մասին տեղեկանալու, այնպես էլ համապատասխան պահանջի կապակցությամբ պարտապանին վերաբերելի այլ իրավունքներ և պարտականություններ:

Պատահական չէ, որ Օրենքի փոփոխություններով հատուկ անդրադարձ կատարվեց նաև այս խնդրին՝ սահմանելով, որ երրորդ անձ գրավատուն համապատասխան պահանջի մասով ունի պարտապանի համար սահմանված բոլոր իրավունքները և պարտականությունները:

³⁷ Տե՛ս *Брагинский М.И., Витрянский В.В.* Договорное право. Общие положения. М., 1997, էջ 401:

§ 7. Պարտապանի՝ որպես երրորդ անձ գրավատուի կարգավիճակը

Ապահովված պահանջների հետ կապված հարցերը քննարկելիս կարևորվում է ոչ միայն երրորդ անձ գրավատուի իրավունքների և օրինական շահերի, այլև այն անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, որոնց նկատմամբ պարտապանը հանդես է գալիս որպես երրորդ անձ գրավատու: Բանն այն է, որ նման անձինք չունեն պարտապանի նկատմամբ որևէ պահանջ, սակայն ունեն նրա գույքից այլ անձի պարտավորությունների համար բավարարում ստանալու ակնկալիք:

Հարկ է նշել, որ մինչև Օրենքի փոփոխությունների ընդունումն այս հարցը չուներ օրենսդրական կարգավորում, ինչը գործնականում հանգեցնում էր տարատեսակ դիրքորոշումների: Արդյունքում այս խնդիրն իր հանգուցալուծումը գտավ Վճռաբեկ դատարանի կողմից: Մասնավորապես, Վճռաբեկ դատարանը նշեց հետևյալը. «Նկատի ունենալով այն հանգամանքը, որ պարտավորությանը չմասնակցող երրորդ անձ գրավատուին սնանկ ճանաչելու դեպքում գրավի իրավունքը դադարեցնելու իրավական հիմք գործող օրենսդրությունը չի նախատեսում, սակայն առկա սնանկության վարույթում սնանկ ճանաչված գրավատուի գույքի իրացումն էական է նաև սնանկության վարույթի այլ մասնակիցների համար, Վճռաբեկ դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև սնանկության վարույթում կիրառվող «պահան-

ջի գրանցում» և «պահանջի չափի հաստատում» իրավական եզրույթների բովանդակության գնահատմանը (բացահայտմանը):

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի «պահանջի գրանցում» իրավական եզրույթի բովանդակությունն իր մեջ ներառում է սնանկ ճանաչված պարտապանի նկատմամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով առկա դրամական պահանջների ներկայացման և պահանջների վերջնական ցուցակում արտացոլման գործընթացը, որի հիման վրա գրանցված պարտատերերը սնանկության վարույթում իրենց հերթին համապատասխան ակնկալում են ստանալ դրամական պահանջի բավարարում:

«Պահանջի չափի հաստատում» իրավական եզրույթը վերաբերում է բացառապես գրավով ապահովված պարտավորության՝ պահանջի չափի որոշմանը՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 233-րդ հոդվածով նախատեսված պայմաններով:»:

Այս հասկացությունների և դրանց առնչվող դրույթների հիման վրա Վճռաբեկ դատարանը կարևոր մոտեցում ձևավորեց այն մասին, որ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ընդգրկված գրավի առարկան՝ որպես պարտավորության կատարման ապահովման միջոց, առաջնահերթ նպատակաուղղվում է գրավով ապահովված պարտավորության կատարմանը, որի չափը ենթակա է հաստատման սնանկության գործը վարող դատավորի կողմից, քանի որ ապահովված իրավունքի առարկայի իրացումից ստացված գերա-

զանցող գումարը ենթակա է վերադարձման գրավատու պարտապանի սնանկության հաշվին³⁸:

Ներկայումս Օրենքն առանձնահատուկ կարգավորման է արժանացրել երրորդ անձ գրավառուի կողմից սնանկության վարույթում պահանջի չափի հաստատման կարգը, ինչպես նաև երրորդ անձ գրավառուի կողմից դա չանելու հետևանքները: Այսպես, Օրենքի 43-րդ հոդվածի 10.3-րդ մասի համաձայն. «Եթե պարտապանը հանդես է գալիս որպես երրորդ անձ գրավատու, ապա կառավարիչը այդ մասին տեղեկանալու օրվանից հնգօրյա ժամկետում ծանուցում է այդ գրավով գրավառուին պարտապանի չմարված պարտավորությունների մասին: Գրավառուի կողմից գրավի առարկան իրացնելու իրավունքից չօգտվելու և գրավի առարկան սնանկության վարույթում իրացվելու դեպքում գրավի առարկան համարվում է գրավառուի պարտավորություններով ծանրաբեռնված նույն պայմաններով, որոնք առկա էին մինչև այդ առարկայի իրացումը», իսկ Օրենքի 39.1-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու խնդրանքով դիմելու իրավունք ունի նաև այն անձը, որի նկատմամբ պարտապանը հանդես է գալիս որպես երրորդ անձ գրավատու:

Վկայակոչված դրույթների համակարգային վերլուծությունից հետևում է, որ

³⁸ Տե՛ս Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ1/0088/04/18 քաղաքացիական գործով 06.04.2020թ. որոշումը:

1. կառավարիչը կրում է անձին, ում նկատմամբ պարտապանը հանդես է գալիս որպես երրորդ անձ գրավատու, պարտապանի չմարված պարտավորությունների մասին ծանուցելու պարտականություն, որը պետք է կատարվի պարտապանի՝ որպես երրորդ անձ գրավատու հանդես գալու մասին տեղեկանալու օրվանից հնգօրյա ժամկետում.

2. երրորդ անձ գրավառուն ունի պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու խնդրանքով դատարան դիմելու իրավունք.

3. պահանջի չափը հաստատելու և ապահովված իրավունքի առարկայի իրացումը թույլատրելու խնդրանքով դատարան դիմելու իրավունքը չիրականացվելու դեպքում գրավի առարկան իրացվում է երրորդ անձ գրավառուի օգտին առկա պարտավորություններով ծանրաբեռնված նույն պայմաններով, որոնք առկա էին մինչև այդ առարկայի իրացումը³⁹:

Այստեղ պետք է նկատել նաև, որ, ի տարբերություն գրավով ապահովված պարտատիրոջ, երրորդ անձ գրավառուի պահանջի չափը հաստատելու և ապահովված իրա-

³⁹ Այն դեպքերում, երբ պարտապանի՝ որպես երրորդ անձ գրավատուի գույքի նկատմամբ առկա է լինում հաջորդող գրավ, այս դրույթը առաջնային գրավի բավարարման դեպքում հնարավորություն է տալիս պահպանել գրավի իրավունքը: Այլ կերպ ասած՝ այս կարգավորումը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված բացառություններից է, երբ, ընդհանուր կանոնի համաձայն, գրավ դրված գույքն օրենքով սահմանված կարգով իրացվելու (վաճառվելու) դեպքում գրավը դադարում է:

վունքների առարկայի իրացումը թույլատրելու խնդրանքով դատարան դիմելու իրավունքը չունի ժամկետային սահմանափակում: Նման եզրահանգումը բխում է այն իրողությունից, որ 39.1-րդ հոդվածի 3-րդ մասում խոսվում է միայն համապատասխան իրավունքի և ոչ թե դրա իրականացման ժամկետի մասին⁴⁰:

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 243.1-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավ դրված գույքի վրա գրավատուի՝ երրորդ անձանց նկատմամբ ունեցած այլ պարտավորությունների կատարման համար արգելադրում, սահեցում, կալանք, բռնազանձում, առգրավում կամ գույքի նկատմամբ ցանկացած այլ սահմանափակում չի կարող խոչընդոտ (արգելք) հանդիսանալ գրավի առարկայից առաջնային բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունեցող գրավառուի համար՝ իրականացնելու նույն օրենսգրքով գրավառուին վերապահված բոլոր իրավունքները, այդ թվում՝ բռնազանձում տարածելու և իրացնելու գրավի առարկան, բացառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով⁴¹ նախատեսված դեպքերի, որոնց հետ

⁴⁰ Ըստ էության, այլ մոտեցում է ձևակերպված Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ1/0082/04/18 սնանկության գործով 10.11.2020թ. որոշմամբ, որում խոսվում է Օրենքի 39.1-րդ հոդվածով նախատեսված ողջ կառուցակարգի և ոչ թե միայն այդ իրավունքի կիրառելիության մասին:

⁴¹ Ընդունվել է 01.07.1998թ.: Ուժի մեջ է մտել 12.01.1999թ.: Տե՛ս ՀՀՊՏ ՀՀՊՏ 1998.09.21/22(55):

կապված հարաբերությունները կարգավորվում են այդ օրենսգրքով:

Այլ կերպ ասած՝ օրենսդիրը գրավառուի կողմից գրավի իրավահարաբերություններից բխող իրավունքների իրականացման այլ կարգ է նախատեսում միայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերի համար և, հետևաբար, բացի քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերից, որևէ նյութական կամ դատավարական օրենքով, այդ թվում՝ նաև գրավատուի սնանկ ճանաչվելու դեպքում գրավառուի իրավունքների սահմանափակում, գրավի դադարում և գրավի առարկայի բռնագանձման արգելք նախատեսված չէ:

ՏԻԳՐԱՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ԳՐԱՎՈՎ ԱՊԱՀՈՎՎԱԾ

ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

**ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ
(ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ)**

ТИГРАН МАРКОСЯН

**ТРЕБОВАНИЯ ОБЕСПЕЧЕННЫЕ ЗАЛОГОМ ПРИ
БАНКРОТСТВЕ**

(НАУЧНО-ПРАКТИЧЕСКОЕ ПОСОБИЕ)

TIGRAN MARKOSYAN

**CLAIMS SECURED BY A PLEDGE IN BANKRUPTCY
PROCEEDING**

(SCIENTIFIC AND PRACTICAL HANDBOOK)

Հանձնվել է հրատարակության 25.04.2021:

Չափսը 60x84 1/16:

Ծավալը՝ 4 տպ. մամուլ:

Արդարադատության ակադեմիայի հրատարակչություն

Ք. Երևան, 0054, Փիրոսյանների փող. 9

www.justiceacademy.am